NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017 թվականի N ԴԵԿԲ-001-01/17

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ներկայացրած թիվ 2281 գրությունը և դեկտեմբերի 29-ին ներկայացված փաստաթղթերը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 19-րդ գլխի 94 կետի 8-րդ ենթակետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59 կետի «զ» ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 144,547,732 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր երեսուներկու) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերին, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMUNIBS10ER5 ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ UNIB հապավումը, և որոնք ընդգրկված են բաժնետոմսերի հիմնական ցուցակում (A), շնորհել դիտարկման ենթակա կարգավիճակ:
2. Սահմանել, որ Ընկերության բաժնետոմսերին շնորհվում է դիտարկման ենթակա կարգավիճակ այն պայմանով, որ Ընկերությունը ամենաուշը մինչև 01.07.2017թ. և դրանից հետո կապահովի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ի 50-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված պահանջը, հակառակ դեպքում Ընկերության բաժնետոմսերը կտեղափոխվեն բաժնետոմսերի երկրորդային ցուցակ (B) կամ կապացուցակվեն՝ դրանք տեղափոխելով Ազատ շուկա (C) կամ առանց դրա:
3. Հանձնարարել Բորսայական ծառայությունների դեպարտամենտին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի տեղեկատվան համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 11-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**